# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՎԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՂ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԹՎԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՎԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՂ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԹՎԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետությունում թվային զարգացման ռազմավարությունը մշակելու, ինչպես նաև թվային զարգացման համաշխարհային գործընթացին Հայաստանի Հանրապետության ակտիվ մասնակցությունն ապահովելու և դրա շրջանակներում իրականացվող աշխատանքները համակարգելու նպատակով՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության թվային զարգացման աջակցող խորհուրդ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության թվային զարգացման աջակցող խորհուրդի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված N 1

ՀՀ վարչապետի 2017 թ.

N որոշման

## Կ Ա Զ Մ

## ԹՎԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ

ՀՀ վարչապետ ( խորհրդի նախագահ)

ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատավական տեխնոլոգիաների նախարար

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար

ՀՀ կրթության և գիտության նախարար

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ (համաձայնությամբ)

Հավելված N 2

ՀՀ վարչապետի 2017 թ.

-ի N որոշման

## Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

## ԹՎԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**
2. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են թվային զարգացման աջակցող խորհրդի (այսուհետ` խորհուրդ) աշխատանքների

կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները:

3. Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն աշխատակարգով:

1. **ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**
2. Խորհրդի նպատակներն են`

- ՀՀ-ում թվային զարգացման ռազմավարության մշակման և իրականացման աշխատանքների համակարգում,
- ՀՀ-ում թվային հասարակության ձևավորման աջակցման աշխատանքների համակարգում,
- Եվրասիական տնտեսական միության, Եվրոպական Միության և Համաշխարհային թվային գործընացների իրագործման և իրականացման աշխատանքների համակարգում:

**III. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

4. Խորհրդին վերապահվում է հետևյալ գործառույթները`

1)Հայաստանի Հանրապետությունում թվային հայեցակարգի ձևավորում` պետական և մասնավոր հատվածների համագործակցության միջոցով,

2) Հայաստանի Հանրապետությունում զարգացած թվային հասարակության ձևավորման ապահովումը,

3) Եվրասիական տնտեսական միության շրջանակում թվային գործընթացների իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների իրականացման համակարգում և ապահովում,

4) Եվրոպական Միության շրջանակում թվային գործընթացների իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների իրականացման համակարգում և ապահովում,

5) Համաշխարհային թվային գործընացում Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովման ուղղված թիրախների նախանշում և միջոցառումների մշակում:

1. **ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ**
2. Խորհրդի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:
3. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ,

ինչպես նաև արտահերթ նիստերի միջոցով՝ սույն աշխատակարգի 10-րդ կետին համապատասխան:

4. Խորհրդի նիստերը հրավիրում և վարում է խորհրդի նախագահը:
5. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում խորհրդի նիստը կարող է վարել անդամներից մեկը՝ խորհրդի նախագահի հանձնարարությամբ:
6. Խորհրդի յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ խորհրդի նախագահի զեկուցմամբ:
7. Խորհուրդն իր արտահերթ նիստերը գումարում է խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի առաջարկությամբ:
8. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի կազմի առնվազն երկու երրորդը:
9. Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:
10. Խորհրդի այն անդամը, ով համաձայն չէ խորհրդի ընդունած որոշմանը, ներկայացնում է իր գրավոր հատուկ կարծիքը, որը կցվում է որոշմանը և հիմք է հանդիսանալու վերջնական կարծիքի համար:
11. Խորհրդի անդամները խորհրդի նիստի անցկացման վայրի, օրվա, ժամի և նիստի օրակարգի մասին քարտուղարության կողմից տեղեկացվում են նիստի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ:
12. Խորհրդի նիստերին կարող են մասնակցել հրավիրված պետական պաշտոնյաներ, համապատասխան մասնագետներ, այդ թվում՝ միջազգային փորձագետներ, զանգվածային լրատվության միջոցների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ:
13. Խորհրդի նախագահի հանձնարարությամբ, խորհրդի նիստի օրակարգի հարցերը նախապատրաստելու նպատակով նախնական քննարկումներ կազմակերպելու համար կարող են հրավիրվել խորհրդակցություններ՝ խորհրդի անդամների առնվազն մեկ երկրորդի մասնակցությամբ:

1. **ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ**
2. Խորհրդի նախագահը ի պաշտոնե Հայաստանի Հանրապետության վարչապետն է:
3. Խորհրդի նախագահը՝

1) համակարգում է խորհրդի գործունեությունը և ապահովում որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությունը,

2) հրավիրում և վարում է խորհրդի նիստերը,

3) ներկայացնում է խորհուրդն այլ մարմինների, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և անձանց հետ հարաբերություններում,

4) համակարգում է խորհրդի քարտուղարության ընդհանուր աշխատանքները,

5) ստորագրում է խորհրդի որոշումները և նիստերի արձանագրությունները, խորհրդի գործունեության հետ կապված մյուս փաստաթղթերն ու գրագրությունները.

6) իր բացակայության դեպքում խորհրդի անդամներից մեկին հանձնարարում է վարել խորհրդի նիստը.

7) խորհրդի հաստատմանն է ներկայացնում խորհրդի նիստի օրակարգը,

8) խորհրդի ընդունած որոշումների կատարման նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.

9) իրականացնում է սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

19. Խորհրդի անդամն իրավունք ունի՝

1) խորհրդի նիստից առնվազն 5 օր առաջ գրավոր հարցեր ներկայացնելու խորհրդի նիստի օրակարգում ընդգրկելու համար.

2) ներկայացնելու առաջարկություններ խորհրդի գործունեության, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

3) ծանոթանալու խորհրդի նիստերի արձանագրություններին:

20. Խորհրդի անդամը պարտավոր է՝

1) մասնակցել խորհրդի աշխատանքներին.

2) իրականացնել սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

21. Խորհրդի անդամն իր պաշտոնից ազատվելու պահից կորցնում է անդամակցությունը խորհրդին: Նրա փոխարեն խորհրդին անդամակցում է նույն պաշտոնն ստանձնած անձը:
22. Խորհրդի անդամի նիստին մասնակցության անհնարինության դեպքում, տվյալ անդամը այդ մասին նախօրոք պետք է գրավոր տեղեկացնի խորհրդի նախագահին՝ նշելով նիստին իր փոխարեն մասնակցող անձի տվյալները(անուն, ազգանուն):

1. **ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ**
2. Խորհրդի քարտուղարության իրավասությունները վերապահվում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմին:

24.Խորհրդի քարտուղարությունը խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն աջակցելու նպատակով՝

1) նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերն ու դրանք տրամադրում խորհրդի անդամներին.

2) կազմում է խորհրդի նիստերի արձանագրությունները.

3) ապահովում է խորհրդի նիստի որոշումների նախագծերի կազմումը.

4) վարում է խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

5) գրանցում է խորհրդի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները.

6) կազմակերպում է խորհրդի որոշումների տրամադրումը խորհրդի անդամներին և համապատասխան կազմակերպություններին:

7) խորհրդի նիստի օրակարգի հարցերը նախապատրաստելու նպատակով հրավիրում են խորհրդակցություններ: